

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ

ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գործարար շահերի պաշտպանության ցանցի հզորացմանը նվիրված սեմինար

Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության համաժողով

«Զարգացման պլանավորման շրջանակ»

«Ճգնաժամը հասել է իր գագաթնակետին»

ՀՀ Կառավարության որոշումը
«Ավելացրած արժեքի հարկի մասին» ՀՀ
Օրենքի 20-րդ հոդվածը կիրարկելու մասին
13.05.2010
N 552-Ն

Գործարար Շահերի պաշտպանության ցանցի հզորացմանը նվիրված սեմինար

Մ.թ. հունիսի 22-23-ը Երևանում տեղի կունենա սեմինար՝ նվիրված գործարար շահերի պաշտպանության ցանցի ինստիտուցիոնալ զարգացմանը: Օրակարգում ընդգրկված թեմաներից են՝ Ցանցի առաքելության և տեսլականի ձևավորումը, ինստիտուցիոնալ կառուցվածքը և իրավական կարգավիճակը, կանոնադրությունը, աշխատանքային սկզբունքները, կառավարումը և այլն:

Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության համաժողով

Հարգանք ժողովրդավարության և մարդու իրավունքների հանդեպ, օրենքի գերակայություն, արդյունավետ կառավարում, շուկայական տնտեսության և կայուն զարգացման սկզբունքներ այս համընդհանուր արժեքներն ու նպատակներն է հետապնդում Արևելյան գործընկերությունը՝ նախատեսված Արևելյան Եվրոպայի երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի համար:

Արևելյան գործընկերությանը նվիրված իր հարորդագրության մեջ Եվրոպական հանձնաժողովը մատնանշել է. «Եվրոպական հարեանության քաղաքականության արևելյան գործընկեր երկրներում ընթացող բարեփոխումները պահանջում են քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ մասնակցություն՝ հանրային ծառայությունների վերահսկումը խթանելու և նրանց հանդեպ հասարակության վստահությունն ամրապնդելու նպատակով: Այդ իսկ պատճառով ԱԳ նախաձեռնությունում քաղաքացիական հասարակության ներգրավման խնդիրը հատուկ ուշադրության պետք է արժանանա»:

Բրյուսելում, 2009թ.ոյեմբերի 16-17-ին կայացած Քաղաքացիական հասարակության համաժողովի ԵՄ և ԱԳ երկրների ավելի քան 200 մասնակիցներ առաջին անգամ հավաքվեցին՝ քննարկելու այս հարցերը: Արդյունքում Արևելյան գործընկերության 4 թեմատիկ պլատֆորմների հիման վրա ձևավորված աշխատանքային խմբերի կողմից մշակվեցին մի շարք առաջարկություններ, որոնք այնուհետև հաստատվեցին Համաժողովի կողմից:

Այսպիսով, ԱԳ-ը գործընկեր երկրներին հնարավորություն է ընձեռում ինտեգրվել Եվրամիությանը՝ կայուն ժողովրդավարական կառույցների զարգացման և քաղաքացիական հասարակության ավելի մեծ մասնակցության խթանման միջոցով, մասնավորապես մարդու իրավունքների, ընտրական չափանիշների համապատասխանության, մամուլի ազատության, կոռուպցիայի դեմ պայքարի, տեղական իշխանությունների վերապատրաստման և ցանցային համագործակցության ոլորտներում: Համաժողովի քննարկումները հանգեցրին այն մտքին, որ ԱԳ գործընկեր երկրներում նպատակահարմար է ստեղծել Ազգային պլատֆորմներ՝ ՔՀԿ-ների միավորումներ, որոնք կաշխատեն ԱԳ սկզբունքներն ու խնդիրներն իրենց երկրներում բաժրացնելու և կյանքի կոչելու ուղղությամբ:

ԱԳ Հայաստանի Ազգային պլատֆորմի նախաձեռնող խումբը (ՆԽ) ձևավորվել է ՔՀ առաջին համաժողովի հայաստանյան պատվիրակներից:

Եվրոպական հանձնաժողովը այժմ հրավիրում է բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնելու հետաքրքրության հայտ՝ մասնակցելու Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության երկրորդ համաժողովին: Հետաքրքրության հայտի ներկայացումը անհրաժեշտ քայլ է հանդիսանում 2010թ. նոյեմբերի 18-19-ը Բեռլինում կայանալիք համաժողովին մասնակցների ընտրության գործընթացում: (Համաժողովին մասնակցության հայտի ձևը կարող եք գտնել հետևյալ հասցեում՝ http://ec.europa.eu/external_relations/eastern/civil_society/forum2010/docs/application_form_csf_2010_en.doc)

«Զարգացման պլանավորման շրջանակ»

«Զարգացման պլանավորման շրջանակ» վեբկայքը նպատակ է հետապնդում համապարփակ և ամբողջական տեսքով ներկայացնել Հայաստանում առկա տնտեսական զարգացման պլանավորման համակարգը, դրա կառուցվածքը և հիմնական տարրերը:

Վեբկայքը կփոխարինի www.PRSP.am վեբկայքին:
Վեբկայքում առանձնացվում են զարգացման պլանավորման ազգային շրջանակը (մասնավորապես, Կայուն զարգացման ծրագիրը), ոլորտային ռազմավարությունները, զարգացման ուղղված միջազգային (քաղաքացիական և երկկողմ) համագործակցությունը և այս ոլորտում առկա մոնիտորինգի և գնահատման համակարգերը: Իր հերթին, նշվածներից յուրաքանչյուրի գծով վեբկայքում ներկայացվելու են՝

- գործող հիմնական փաստաթղթերը, պայմանագրերը և համաձայնագրերը,
- կառավարման կառուցվածքը,
- իրականացվող հիմնական ծրագրերը,
- իրականացվող միջոցառումների ցանկը,
- մոնիտորինգային հիմնական ցուցանիշները և ընթացքի հաշվետվությունները,
- ընթացիկ նորությունները և հայտարարությունները:

Նշված տեղեկատվության գեներացումը կապահովի պլանավորման գործընթացների թափանցիկությունը և տեղեկատվության հասանելիությունը հասարակության լայն շրջանակի համար:

«Ճգնաժամը հասել է իր գագաթնակետին»

ՕԵԿ խմբակցության անդամ Արծրունի Աղաջանյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսելով ՀՀ տնտեսական վիճակի մասին նշել է, որ ճգնաժամը հասել է իր գագաթնակետին:

-Տնտեսական ճգնաժամի արդյունքները ոչ միայն այս տարի, այլ նաև եկող տարի, զգացնել են տալու: Մակայն դրական մի բան կա, որ Հայաստանը լինելով թույլ ինտեգրված եվրոպական տնտեսական ոլորտին՝ հնարավորություն ունի ավելի մեղմ և որոշակի արագ շրջանցել այդ պիկը: Այս առումով, լինելով մարզից ընտրված պատգամավոր, ես հաճախակի եմ շփվում մարզերի բնակիչների հետ, և խիստ մտահոգություն կա բնակչություն շրջանում: Չնայած դրան՝ կառավարության կողմից իրականացվեցին քայլեր՝ 2009թ. սոցժրագիրը իրականացվեց, 2010թ. նույնպես իրականացվում է շիանարարություն աղետի գոտում, բայց այսքանով հանդերձ ես կուզեմայի, որ արտաքին հարաբերություններում իրականացված նախաձեռնողականությունը նաև իրականացվեք տնտեսական ոլորտում, որը չի նկատվում,-ասել է նա:
Արծրունի Աղաջանյանի խոսքերով՝ ճգնաժամը դեռ հաղթահարված չէ, բայց միտում կա:

-Կարելի է ասել, որ հաղթահարվել է ճգնաժամը՝ սկզբի մեր իրավիճակի հետ համեմատած, բայց լիարժեք հաղթահարել կլինի, եթե մենք հասնենք այն նույն վիճակին, ինչ 2008թ. էր,-ասել է նա:
Ըստ Արծրունի Աղաջանյանի՝ կառավարության ղեկավարը խոսել է փոքր և միջին բիզնեսի նկատմամբ ձեռնարկված որոշակի քայլերի մասին, որոնք արդյունք չեն տվել, որովհետև հարկային մարմինների կողմից ստուգումները խիստ շատացել են:

-Հատկապես տնտեսական ճգնաժամի պայմաններում որոշակի արտոնություններ պետք է տրվեն փոքր և միջին բիզնեսին, հնարավորություն տան գոյատևելու, որովհետև եթե մենք բիզնեսը այդ դժվար իրավիճակում կպահպանեք իր գործունեությունը, ապա փոքր և միջին բիզնեսին պետք է առավելություններ տրվեն, որ գոյատևեն, և այս առումով կառավարությունը մտածելու շատ բան ունի,-ասել է նա:

Պատասխանելով . 7օր-ի այն հարցին, թե ընտրությունների ժամանակ ՕԵԿ-ը հանդես էր գալիս փոքր և միջին բիզնեսի շահերի պաշտպանության տեսանկյունից, այդ դեպքում ինչն էր և կողմ քվեարկում կառավարության ներկայացրած այն օրինագծերին, որոնցով հարված է հասցվում փոքր և միջին բիզնեսին՝ ՕԵԿ պատգամավորն ասել է, թե իրենց խմբակցությունը ԱԺ-ում առաջարկություն է ներկայացրել, որպեսզի փոքր բիզնեսի ոլորտում ստուգումներ չիրականացվեն, և որ այն ընդունվել է:

-Բայց այդ որոշակի ծավալից հետո գործունեություն իրականացնող տնտեսավարողների մոտ հարկային մարմինների ստուգումները կրկնակի-եռակի ավելացել են, և դա ոչ ԱԺ-ում է քննարկվում, ոչ էլ ԱԺ պատգամավորները տեղյակ են: Դա գործադիրի լրագրությունների մեջ է մտնում, որը կառավարության ղեկավարը պարզաբանել է: Հարկային ստուգումները միանշանակ որոշակի մտորումների, ավելորդ նյարդային վիճակի պատճառ են դառնում, որ գործունեությունը խոչընդոտվի,-նշել է նա:

7or.am



AFIC

Օտարերկրյա Ներդրումների և Համագործակցության
Ասոցիացիա



Մասնավոր Չեռներեցության Միջազգային Կենտրոն
(ԱՄՆ)